

**«ԱՏԵՂԾԱՐԱՐ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ
ՆԵՐՈՒԺԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ»
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Ծրագրի նպատակն էր հետազոտության միջոցով բացահայտել ստեղծարար տնտեսության մեջ երիտասարդների զբաղվածության ներուժը և զարգացման հեռանկարները:

Հետազոտությունն կիրականացվեց երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտի թիմի կողմից: Ինչպես նաև որպես փորձագետ բաց մրցույթով ընտրվեցին երկու փորձագետներ՝ մեկ ստեղծարար տնտեսության ոլորտի մասնագետ և մեկ տնտեսագետ:

Ուսումնասիրության շրջանակներում կիրառվեցին հետևյալ հետազոտական մեթոդները՝

- 1) փաստաթղթերի վերլուծություն.
- ա) միջազգային հետազոտական հաշվետվություններ,
- բ) վիճակագրական տվյալների ուսումնասիրություն,
- գ) իրականացված տարբեր ծրագրային փաստաթղթեր:

2) Փորձագիտական հարցազրույցներ. մինչև 10 փորձագիտական հարցազրույց տնտեսության, զբաղվածության, մասնագիտական կրթության ոլորտի մասնագետների շրջանում:

3) Առանցքային տեղեկատուների հետ հարցազրույցներ. մինչև 15 հարցազրույց ստեղծարար տնտեսության արդյունաբերական ոլորտներում գործող տարբեր կառույցների ներկայացուցիչների հետ:

4) Հարցում. երիտասարդների շրջանում իրականացվեց 600 հարցում՝ ստանդարտացված հարցազրույցի մեթոդով:

Արդյունքում նախապատրաստվեց հետազոտության ամփոփ զեկույցը:

Ծրագրի ֆինանսական կատարողական

N	Անվանումը	Նախահաշիվ	Կատարողական
1.	Հոնորարներ	330 000	330 000
2.	Դաշտային աշխատանքների իրականացում	890 000	880 000
3.	Զեկույցի ձևավորում	200 000	200 000
4.	Հարցազրույցներ	120 000	120 000
5.	Տվյալների մուտքագրում	60 000	60 000
	ԸՆԴԱՄԵՆԸ	1 600 000	1 590 000